

ՔԱՏԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ  
 Պոչխարից համար 10 Ձր.  
 Տարեկան 5 »  
 Արտասահմանի համար տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 ԿԱՆԻՍԻՅ ԿՆԱՐԵԼԻ  
 —)(—  
 Գրուրիւնի և չեմ տրուիր  
 —)(—  
 Ծանուցման տողը 20 սան-  
 թիւ է. երեքին անգիւսն-  
 զաններու համար 20 Օլօ  
 զեղջ կրնայ:

# ՇԱՐՓՈՒՄ

հասնակ և գրաւ դրկիչ  
 Խմբագրութեան հասցիին.

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅԻՆԻ ԶՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
 АДВОКАТЪ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—)(—  
 Ա.

Ասանկ բան մըն ալ ունինք, կարծեմ. արտասահմանի կարգ մը թերթերու մէջ, նոյն իսկ մասնաւոր եռանդ մը արտայայտուած է պարզելու, կամ, մանաւանդ, ճշգրտու քաղաքական ան ուղղութիւնը որուն հայ ազգը պարտաւոր է հետեւիլ:

Մեր քաղաքական ուղղութիւնը գլխաւորապէս երկու առանցքի վրայ կը դառնայ. առ լրագիրներուն ըսածին նայելով, ինչ որ ճիշդ ալ կերեւայ. անգլիական և ռուսական: Հոգածու և հեռաստեւ խմբագիրներ՝ հայուն մահուան և կեանքին խնդիրը այս կնճուտ հարցին վրայ կայացած ըլլալը հասկնալով, իրենց բոլոր մտաւորական և ֆիզիքական կարողութիւնները սըրբեցին ու սարքեցին վերջին բառն արձկելու համար թէ հայը ունի թէ անգլիական քաղաքականութեան յարելու է:

Այս թերթը ուղեւժ վիճաբանութիւններուն որքան ալ հետաքրքրութեամբ հետեւած ենք, բանակուողներուն հաշտարար վախճանի մը կամ համոզելի լուծման մը յանգելին չտեսանք գեթախտաբար: Եւ մեր գիտցածը սա է որ այդ հարցը գեռօգին մէջ կախուած կը մնայ անորոշ, սարտամ, երբուն, ո՞ր կողմը հակելուն շուարած:

Ու եւ հարցի մը շուրջ ասանկ պոռակէն, փրփրակէն, հայհոյեւէն, հառնչեւէն. դիւրին բան չիկայ. մինակ կը մնայ գիտնալ թէ յոգնութիւնը կարժէ՞, կարժէ՞ այդքան մեղան սպառել, թուղթ սեւցնել, միտք չարչարել, երեւակայութիւններ բորբոքել, մութ ու պայծառ խաբուսիկ հարիզոններ պարզել փոխնիփոխ, յոյսեր, յուսալրիպումներ առթել, ու բոլոր այս մեծաշունգ գործունէութեանն ևս՝ քայլ մը առաջացած չըլլալ, ու վարանտ կենալ հարցին հանդէպ ինչպէս գարոցի

աչկերտ մը թուարանական մանուածս խնդրի մը առջև:

Մեր քաղաքական ուղղութիւնը. այս երկու բառերը ծիծաղ շարժող բան մը չեն պարունակեր, ամենէն ուսուցիկ, ամենէն դարտակ դաշտաբար, որ երբեք կարենայ պատշաճի մեր ազգային արդի անկերպարան կացութեանը:

Անգլիոյ յարիլ թէ Ռուսիոյ, այս երկու աւերութիւններէ մէկուն, որոնք կարծես վայրկեանէ վայրկեան սրտատրոփ կսպասեն իմանալու թէ հայկական արտաքին քաղաքականութիւնը որի՞ ի նպատակ վիճու պիտի արձակէ: Մենք որ շատ պարագաներու մէջ յաջողած ենք ինքզինքնին կամ իրար զիրար խաբել, իբր 20 տարիէ ի վեր մեր ամէն ջանքը թափած ենք անընդմիջաբար զոհ երթալու այս անհեթեթ խաղին, զոր չեն գիտեր ո՞ր հայ գիւանդէտը բերել մայրուցեր է մեր անհամար ձախողուածներուն մէջ, ատոնց աւելի սաստիկ ու դահաւիժ հանգամանք մը տալու համար կարծես: Դեռ չսորվեցանք որ անգլիական նաւերը Արարատ լեռը չեն կրնար ելլալ, և եկեղեցիի մէջ փակուած երեք հազար մարդոց հր՛իլլումը Ռուսիոյ համար աննշան միջադէպ մըն է:

Կարծես Եւրոպայի դիւանագիտական նժարը մեր վճռին կըստատէ կոր իր վերջնական հակումը ցուցնելու համար, այնքան իրար անցած ենք միշտ մեր արտաքին քաղաքական ուղղութիւնը ճշգրտու մասին, մենք որ, ցաւալիք է ըսել, մեր ներքին ազգային ուղղութիւնը գեռգտած չենք ու առխարխափ բան մըն է կերթայ անորոշ ու անվախճան:

Պահ մը ենթադրենք նոյն իսկ թէ վերջնապէս փնտռեցինք գտանք որ Ռուսիոյ (կամ Անդլիոյ) յարելու է: Այս յարուժը ունի՞ այնքան հզօր յատկութիւն մը որով Ռուսիա (կամ Անգլիա) ինքզինքը բախտաբարուած համարելով մեր ակնկալութիւններուն մարմին մը տալ ուղէ, ա-

ռանց նկատի առնելու իր սեփական շահերը, նոյն իսկ զոհելով զանոնք: 19 թդ դարուն նուազման մօտ ասանկ հրաշք կընա՞յ սպասուիլ:

ՇԱՐՓ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարից, 15 Մայիս

Ռուսանողներու միութիւնը քիչ չառ կարգի մանկութեամբ էր, և անաւ իրենցմէ մէկ քանինը կը զիմեն ան ֆրանսացի բարձրագոյններուն, որոնք ազգաւ հայ ուսանողներու հանդանակութեամբ ձեռնարկած են, ու պարզելով իրենց պատակտուած վիճակը՝ կը խնդրեն որ հանին իրենց հետ միասնալ կազմակերպելու համար հայ ուսանողաց միութիւնը: Ճիշտնայի ուսանողները, որ բարեկիրա երկրասարգները ըլլալ կը թելին, կը փութան ընդունիլ այս առաջարկը. նախնական գործողութիւնները կը կատարուին և վերջնական որոշումները ապագային կը թողուին:

Լաւագոյն չէ՞ր ըլլար որ այս ուսանողներ ամէն ճիգ թափելին առաջուց կարգի գնելու իրենց միութիւնը, փոխանակ պատակտուած վիճակի մէջ օտարին օգնութեանը զիմնու: Հայ ուսանողները ոչ միայն այս անպատուութեան սոկացին, այլ և անտարբերութեամբ մարտեցին նոր-նոր թղթակից Պ. Շահ Մեկիքանցի սա խօսքին նախատական խոստով. «Հայ ուսանողք զիմնուլով թէ վնաս պիտի բնեն... կազմակերպեցին երեկոյթը՝ հաստատուի հայ հարուստներուն ցուցնելու համար...»

Ռուսանողներու միութեան պարահանդէսը 800 ֆրանքի բաց մը թողած է, շնորհիւ ան երկրասարգներուն որոնք լաւ դրօսանքի միտուն գործեցին նախապէս տրուած երեկոյթի որոշումը: Եւ այդ բացին համար ելլալ Բարիցի հանձնարարները զրոգարտել, զանոնք հաստատուի կոչելով, ուղիղ գաղտնութեան գործ չէ:

Բարիցի հայ հարուստները (հազել 4-5 հաս) զնեցին սպասուած տոմսակներուն մեծ մասը: Անոնք են որ 10-20, 30-40 ֆրանք ամսական յատկացուցած են հայ ուսանողներու մէկ կարեւոր մասին՝ ուսման չըրջանին աւարտելու համար: Մենք բնել չենք ուզեր թէ Բարիցի մէկ քանի հայ հարուստները չեն կրնար 30-40 հազար ֆրանք յատկացունել Հայաստանի մէջ որբանոցի մը հաս-

տատութեան կամ ուրիշ բարեգործութիւններու համար: Ասոր ալ պատճառը կարող առաջնորդի մը պակասն է:

Բարիցի հաստատուի հայ հարուստներուն ազգասիրական զգացմանը ապացոյց են սա թուանշանները. 1894ին 10,000 ֆրանք հանդանակութեամբ յանձնարարի մը ձեռքով, որուն գլուխն էր Պ. Էգնասեան, և գրկուեցաւ Ս. Հայրապետին: 1896ին 10,000 ֆրանք ժողովուրդեացու նոյն անձերու միջոցով, ու գրկուեցաւ Իզաբելեան Պատրիարքին: Պ. Յովսէփեան 3,000 ֆրանք հանդանակութեամբ է Օրմանեան Պատրիարքին որբանամ գործին համար: 96-97 պարիներուն մէջ՝ զաղթականներու համար ծախսուած է 20,000 ֆրանքին աւելի, որուն մեծագոյն մասը հայերը առած են:

Այս պայմաններուն մէջ, ինչ անուն ալ ան մարդուն որ նախատական բառով մը կը վարձարէ իր հարուստ հայրենակիցները:

ՏԻՏՕ

Փօֆչան, 15 Մայիս

Ռուսանալ ամսոյս 10ին տօնեց փառաւոր հանդէսներով իր անկախութեան 21րդ տարեդարձը:

Արդարեւ 1866 մայիս 10ին էր որ Գարոլ Ա. Ռուսանիոյ իշխանական զահը բազմելու հրաւիրուեցաւ. 1877 մայիս 10ին անկախութիւն հրատարակեց Ռուսանիա. Ռուսիոյ հետ Բլէշնայի ճակատամարտին մէջ նետուելով յաղթական, թօթափեց բոլորովին ծանր լուծը Սուլթաններուն. ու վերջապէս, 1881 մայիս 10ին Ռուսանիա բարձրացաւ թագաւորութեան:

Այս փառաւոր գէպերը ճշմարտապէս իրաւունք կըստան Ռուսան ազգին, որ իբր նկատէ մայիս 10ը, փառաւորէ զայն շքեղազարդ պաշտօններէն մինչև գիւղական յետին խրճիթը: Փօֆչան ալ տօնեց հանդիսաւորապէս այդ պատմական օրը:

Ժամը եօթուկէսին բարձրագոյն վարժարանին 7-8 հարիւրի չափ ուսանողները բողբոլուած էին, վարժարանին բնագործակ բակին մէջ, ուսուցչական մարմինն շուրջը, որուն առջև կանտուղ ընդարձակ ծառուղիին վրայ բազմութիւնը խոնուած է անհուն ոգևորութեան մէջ: Ժամը 8ին բեմ կը բարձրանայ վարժարանին անօրէնը: Ընդհանուր ազգերու պատմութեան խմատասիրութիւնը կընէ, ընդարձակ գծերու մէջ, և կը պանծացնէ Բլէշնայի հոգակաւոր յաղթանակը, որ կեանք պարգեւած էր ամբողջ Ռուսանիոյ:

ՀԱՅ ԲԱՆԱՐԱԿԱԿԱՆ




Իրեն կը յաջորդէ վարժարանին երկասարկ ուսուցիչը պատմութեան : Բլէյլայի ճակատամարտն է իր նիւթը : Անոնք որ կուրորէն հաւատացող մը մնացած են մինչև յարգ՝ Ռուսիոյ քրիստոնեաներու պաշտպան տիրոջին ու անոր անկեղծութեան ջերմասէս հաւատացող մը , աղակալ են անշուշտ սա իրողութեան . Ռուս մէններուն իշխանը 1877ին Ռուսիոյ Արևմտեան Բէն ստացած է սա հեռագիրը՝ Բլէյլայի պատերազմի դաշտէն . «Մեզի օգնութեան եկուր , ուսկից որ կուզես Դանուբը անցիր , ինչ պայմաններով որ կուզես , բայց շուտ ընդ փոյթ մեզի օգնութեան եկուր : Թուրքերը մեզ կը յաղթեն . քրիստոնէութեան դասը կորսուած է» :

Յայտնի է թէ՛ Բլէյլայի փառաւոր յաղթանակէն ու կայսեր մը «Ինչ պայմաններով որ կուզես» խոստումէն յետոյ , Ռուսիա ինչպէս խըլցնելու մտաւ իր արդաստար , էն կարևոր մէկ մասը , Պետրոսովիչն , որուն կորուստը միշտ կողքայ Ռուս մանկա : Այս անիրաւութեան դէմ բողոքողներուն մարմնացումը եղած էր ատենարան ուսուցիչը , որուն խօսքերը , գէպի ուսանողները , այսպէս կը վերջանար . «Դուք , երկուստեքներ , Ռուսմանիոյ ապագայ կորովի ուժերը , ձեր ուսերուն վրայ կը ծանրանայ պարտականութիւնը փրկութեան այն մեծ կորուստին , զոր մայր-Հայրենիքը ունեցած , անիրաւարար Ռուսիոյ յափշտակել տալով իր մէկ մասը , Կեսարպարանն «Մամբրիկա» (՝) կերէք , թշուառ ապրեցէք , բայց սիրեցէք միութիւնը , ու մի խնայէք ձեր արեան վերջին կաթիլը փրկելու համար օտար լուծի տակ ձեր տառապող ազգակիցները : Ամեն բանէ վեր սիրեցէք ազատութիւնը» :

Ատենարանութեան աւարտումէն յետոյ , ուսանողները բանակի մը կազմակերպութեամբ՝ քաղաքին զըլխաւոր պողոտաներէն անցան միանալու համար այն մեծ թափօրին , որ մայիս 10ը տօնելու համար կազմակերպուած էր : Ընդհանուր ոգեւորութեան եւ իրախճանութեան մէջ վերջացաւ այս յիշատակալից օրը : ԿՌԻԻԿ


ՆԱՄԱԿԱՏՈՒՓ



Արտասահմանէ խմբագրութեանս մանսա բոս խրկող Պատ. բաժանորդներէն կը խնդրենք որ երկտողով մըն ալ իրենց անունը յայտնեն , որովհետեւ այնուայն անգեր միեւնոյն քաղաքին մէջ մէկէ աւելի բաժանորդներ ունենալով , առանց այդ երկտողին անհնարին է հասկնալ թէ ո՞վ է բաժնեկիւնը զրկողը :

Պապիկ , Փ . Պոլիս . — Ձեր յօդուածէն թերեւս առաջիկային օգտուինք : Դրամը զրկեցէք , նորէն նոյն ճամբով իր հասցէին կուղղուի :

Լօմ , Ա . Գ . Խ . — Ձեր հետաքրքրութիւնը գոհացնելու համար ուղղակի Մշակի խմբագրութեան զիմելու էք :



(՝) Եզրպատարանի ախրէն պատրաստուած սեսակ մը խմոր , որ Ռուսմանիոյ ազգային կերակուր նկատուած է :

Ձեռքիս շրջայ , ոսխի շրջայ անրակուր ,

Ձրգած եւ զիս բանսի անկիւն մը խոնար ,

Այս մութ խորշեր կազդեն ինձի վախ ,

Եւ կը հիւստիս ֆայսայուելով եւ սախար :

Կը քառակի վարչը անկիւն , աշտնուս ,

Եւ շրջորոնքս կը սրճողունին , վախ , սրտնոյն .

Կը նրապիւն ախրէն ու բոցն աշտնուս ,

Եւ կը մաշէ սիրտս կարծես որդ մը քոյն :

Ձեռնիմ մեկը . ազատութեան չիկայ յոյս ,

Պատեհակես չիզար ինձի փայտուն յոյս .

Մարմինս բնկածս անբանսնեմ չարար ,

Այլիս առիւն է զիմելուս խաւար :

Մօս է ձանր , մօս է մահուանս բոցակն ,

Կըզգաւ որ շուտ պիտի երթաւ աշխարհին .

Պիտի քոյուել իմ սիրելի հայրենիք ,

Որուն սիրովը կընկնիս շատ չարիք :

Վերջին անգամ ժանգոս շրջարս կը սարսել .

Անհաշտ վրեժ մեր քշնալի սարսելու . . .

Բարով մընաւ , ֆայցը հայրենիքիս , կիսել .

Եւ կը փարիմ պա՛ղ պա՛ղ ու սեւ հողերուն :

Մի՛ լար , մայրիկ , զաւկից վրայ սիրակցն .

Մի՛ շաֆ , մայրեք , ձեր անուշիկ զաւկներ .

Թո՛ղ մեզ յարգեք , երիտակ հայ տղան ,

Հանց այն սեւն մեկի կրակնակնի հայրենիք :

Ու երբ զարուր զայ չխաղ , զնդանի ,

Երբ մեր երկիր անկախ , ազատ կը կանգնի .


Թո՛ղ մեզ յիշե՛ ով որ հայու սիրտունի ,

Եւ մեր շիւղին պրակ զրնէ հայրենիք :

ՏԻՊԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ Ռուսչուք

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՐՄԵՆ ԱՐՏՈՆՑ



Տասնընկուորէն աւելի կեցաւ ան վառնայի մէջ , միջին հասակով , նրբակազմ համակրելի երիտասարդ մը : Վառնան , արդէն սովորած միշտ նոր հիւրեր ունենալու , բնականաբար անհետաքրքիր կը մնար այս նոր հիւրին : Բայց մեզ համար կարեւորութիւն ունէր անիկա , այդ նիւար երիտասարդը : Իր ճանչցողները գիտեն որ կեղծանկար վարժարանի համակրելի ուսանողներէն էր . երբորդ զասարանի աւարտականներէն մէկը , որ Պոլսի վերջին ցոյցին օրերուն նետուած էր ֆրանսական շոգենաւ մը , եւ , ճակատագրին թողուած թախտերու պէս , Մարսիլիա ցամաք կըլար :

Իր խոսքայտոյց , աճապարտ փախուստականի դէմքին վրայ՝ շոգենաւ էին մէջ , հետաքրքրելի ունեցած էր , եւ շուտով համակրանքի շրջանակ մը կազմուած էր բարբաբը :

Մարսիլիոյ մէջ ալ շուտով ինքզինքը ճանչցուցած է . շուտով խօսուած է իր վրայ . եւ անա ժամագրութիւն մը Տիլլի Նիլզի թղթակցին կողմէ : Փախստականը սիրով կընդունուի . եւ թղթակցի մը ծծող հետաքրքրութիւնը պէտք եղածին պէս գոհացնելու դէմք մը երեւան կուզայ իր հարթ լեզուին , կոկիկ ու մշակուած ոճին ու պղտելի գաղափարներուն մէջ :

Տիլլի Նիլզի թղթակցից անոր մէկ նամակը հրատարակել կուտայ իր թերթին մէջ , եւ կեանքէն օրը աչքեր կը գոռնան գէպի արեւելցի այդ տղան , որ երոպական մտքի անուշութիւններ ցուցուցած էր իր գրքուածքին մէջ : Ուստի , կուզեն զինքը , եւ անգլիացի երիտասարդ մը , պարոն Բրեւկուա , իր ձեռքը կը բանայ գէպի փախստական սեբաստացին՝ զանի հիւրընկալելու համար իր տանը մէջ :

Բայց կեղծանկարներն , բնութեամբ աղին , իրեն մասուցուած կեանքի դիրքութիւններուն մէջ միայն կէտի մը կը յատի , աշխատութեան . այնպէս որ ուրիշներէ շատ աւելի լաւ ըմբռնած է թէ ինք իր մաքուր քրտինքովը խակապէս պէտք է արժանի ըլլայ բրիտանական հիւրասիրտութեանը : Եւ այդ աշխատութիւնը , որուն անձնատուր եղած է անձի օրէն , երեւան կը հանէ ձեռքեր՝ որոնք այլ եւ այլ կողմերէ կը բարձրանան հայ երիտասարդին տրամադրելի ընկելու զուժար մը՝ որով այսօր կարող եղած է իր փախստական քնկերներէն մէկ քանին բարձրագոյն զարգացնելու մէջ դնելու եւ մէկ քանին ալ նոյն իսկ բոնտերէն ազատել տալու : Պոլսի անգլիական զեսպանին միջնորդութեամբը : Ու այս ամէնուն մէջ իրեն գործակից ունի իր հիւրընկալ երիտասարդը , պարոն Թրեւկուա :

Այս կեղծանկարներն էր անա որ երեցաւ վառնայի մէջ . եւ այն քանի մը օրերը , որոնք հանգստի օրեր պիտի ըլլային իրեն իր ամենակարօտ ծնողքին քով , անցուց հիւանդանոցի , արուեստանոցի կեանքերուն քննութեամբը , ու մեկնեցաւ այս շարժու հետը տանելով քանի մը օրեր :

Որքերու տարագրութիւնը համակրելի գաղափար մը չէ մեզի , հովին առջին ինկած փետուրի մը պէս կեանքեր , նախորդ տարի ամէն կողմէ արգելքներ եղան շրջուելու որ մեր երախաները ցրուին եւրոպական անկիւններ՝ օր մը բոլորովին չքանալու ահագին զանգուածներուն մէջ : Բայց այս վերջինները , կեղծանկարի սեբաստացիին տարած օրերը , Գրիստով անունով որսացուած կորուստներ չպիտի ըլլան . առտոնք , ազատ ո՛ւնէ մոլեռանդի կաշկանգումէ , պիտի մեծնան անգլիական ստուերուն մէջ եւ Արմէն Արտոնց պիտի հսկէ անոնց վրայ , անոնց հետ պիտի թղթակցի , զանոնք պիտի տեսնէ , անոնց ձգտումներուն ուղղիչ պիտի ըլլայ , եւ , այսպէս , պիտի պատրաստէ , անգլիական ա-

սողջ կրթութեամբ , հայ մարդիկ ու աղջիկներ :

Յաջողութիւն , սրտանց , այդ համակրելի երիտասարդին . յաջողութիւն իր ուրիշ ծրարներէն մասին , որոնց համար մեծ հաւատարիք են իր անկեղծութիւնը , իր անվճատ աշխատութիւնն ու ձգտումը :

ՀԱՒԱՍՊ

ՔԻՐԻԼ ԵՒ ՄԷԹՕՏԻ

ՍԱՒ ԵՐԿՈՒ ԼՈՒՍԱՒՈՐՆԻՑ՝ ԵՐԸ

(Շար. նախընթաց քիւրիլ եւ վերջ)

Մորաւիոյ մէջ ետնագուն եւ արդիւնաւոր գործունէութիւն մը ունեցան Քիրիլ եւ Մէթօտի : 862էն մինչև 867 մէկ գաւառէն մուտք կը վազէին Եւ վարժարաններ կը հիմնէին : Սլաւ մանուկները՝ որոնք մինչև այն ատեն լատիններէն կամ յունարէն կը սորվէին վարժարաններու մէջ՝ այժմ սլաւերէն՝ կուսանէին եւ բոլոր եկեղեցիներու մէջ սլաւերէն ժամերգութիւն հաստատուեցաւ :

Սակայն Հոռոմի պապը եւ կաթոլիկ կղերը՝ մանաւանդ զերման եպիսկոպոսները զայրացան այս երկուսուրբ եւ անկեղծ վարդապետներուն դէմ :

867ին սկիզբները Պոլսոյ Տիօթիկ պատրիարքին ինկաւ եւ Մորաւիոյ իշխանը գերմանացիներու հետ անյայտ վատեարգ մը ունեցաւ : Ասոր վրայ Նիկիոյ յայտն իսկոյն Հոռոմ կանչեց Քիրիլը եւ Մէթօտին , բայց ասոնք տակաւին Հոռոմ հասած չէին երբ պապը միտաւ : Իրեն յաջորդն Աղրիանոս՝ վախճալով որ իր ազգացութիւնը Մորաւիոյ եւ Բանտիոյ վրային կը ջնջուի՝ հրապարակով գոհութիւն յայտնեց երկու եղբայրներուն աստուածանուէր՝ ծառայութեան համար :

Քիրիլը ունեցած սեփական կեանքն՝ անոր անողջութիւնը խանգարած էր արդէն եւ 869 փետր. 14ին 42 տարեկան հասակին մէջ վախճանելով Հոռոմի Ս . Վլադիմիր անուն հին եկեղեցիին մէջ թաղուեցաւ : Քիրիլ մեռնելու ատեն Մէթօտիէն խոստում առած էր Ս . գործը շարունակելու :

Մէթօտի առանձին վերագործաւ Մորաւիոյ սլաւներուն քով , եւ գերման կրօնաւորներուն թելադրութեամբ երկուքուկէս տարուան աքսորէ յետոյ , պապին իրաւասութեան ներքեւ եպիսկոպոս կարգուեցաւ Մորաւիոյ , ու թէև նոյն կրօնաւորներուն կողմէ միշտ հալածուեցաւ ու ամբաստանուեցաւ պապին առջեւ , բայց ինք կրցաւ ինքզինքը արդարացնել :

Հակառակ գերմաններու բոլոր ճիգերուն՝ Մէթօտի սլաւերէն ժամերգութիւնները կը լսուէին ամբողջ իրաւաթիւս եւ Տալմաթիա , մինչև Բուլոնիոյ սահմանները : Քրիստոնէութիւնն եւ լուսաւորութիւնը չորս կողմ տարածուելով Ձէլսերն իրենց Պարիս իշխանին հետ ազգովին մկրտուեցան :

885 ապրիլ 6ին վախճանեցաւ Մէթօտի եւ թաղուեցաւ Մորաւիոյ մայրաքաղաք Վէլիկարաւի մէջ , որ յետոյ Յրդ գարուն վերջերս անբակ գառնալով 1197ին Ձէլսերու վախճանու թագաւորին եղբայրը հոն վախճ մը հիմնեց :

Մէթօտի մահուանէն ետք իր անշակերտները շարունակեցին իր գործը :

ծը, միշտ հալածուելով պերման կրօնաւորներէն որոնց ազդեցութեամբ արեւմտեան սլաւները տակաւ մոռցան Քրիստի եւ Մէթօսի սլաւերէն ժամերգութիւնները . իսկ պուլկարները, ուսերը, սերպերն ու սելւեանցիները հաւատարիմ մնացին տնոնց վարդապետութեան եւ մինչեւ հիմա Քրիստի եւ Մէթօսի ժամերգութիւնները կը կատարեն իրենց եկեղեցիներուն մէջ սլաւերէն լեզուով, որ աւելի մօտ է Մակեդոնիոյ աշխարհի պուլկարներէն:

ՏԻԳՐԱՆ ԱՃԼՄԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

—)(—

Եւ սակայն ցաւալի է ըսել որ, այդ աթոռին վրայ բազմազան անարժան կաթողիկոսի անձնասէր հոգիտութեամբ՝ զրէթէ այդ բոլոր եկամտունքը ու աւատ շահերը յուժմէտ գողերի ու մանկլաիկ մանուկներին գրպանը պարարտացնելու միայն ծառայած են, առանց բարոյական փոքրիկ օգուտ մը արտադրելու իր գծախառն թէմականներուն ու վերին աստիճանի տգէտ ժողովրդեան: Որքան կը յիշենք մենք, այս կարեւոր կեդրոնը ո՛չ օրինաւոր գաղտնի ու ո՛չ ողբերգալ վանհայրութիւն մը չէ ունեցած: Հոս նստող կաթողիկոսը իր եսին ու քմահաճոյքին տեսակէտէն միշտ դիտած է ամէն բան, ու Խաչատուր կաթողիկոսը՝ իր վրայ ծանրացող ամէն տեսակ ամբաստանութիւն ու քննադատութիւն արդարացնելու անժխտելի ապացոյց սուած է իր խոտելի զոչաքաղութեամբ ու աստական կոյր հակումներով: Այդ կեղծիքի ու շողքորթութեան հաստ իրան մտադանգուածը՝ որ մետաղի, նիւթի գոյութենէն զատ իր խելագատա-

կին մէջ տարբեր նիւթի մը գոյութիւնը չէր կրեր, իրեն սկզբունք ըրած էր հալածել ու հարուածել այն սմէն ազնիւ գաղափարը ու լուսաւորեալ հայեացքի տէր անհատները՝ որոնք փորձ մը բնէին այդ ազգ. հաստատութիւնը մասամբ իր կոչման ծառայելու շաղկին մէջ տեսնելու: Հանդուցեալ կաթողիկոսի հոգեբանական այս տիուր նկարագիր կրող անկիրթ ու կոշտ մարդ մը, Մանուկ անունով, կը վայելէր իր անասման վստահութիւնը: Անդին, խեղճ ու կրակ միաբանութիւն մը կար որ երբեք կարեւորութիւն չըտանալէ զատ, իր առօրին պէտքերն անգամ չէր կրնար հոգալ: Այդ մեծանուն թոռի ամէն եկամուտ ու հարստութիւն՝ մեծ պղտիկ մանուկներին (\*) մեղապարտ ընկերակցութեան շահաբաժինը կը թափ... Այլմամբայ տան տարեգրութեան էջին մէջ՝ Խաչատուր կաթողիկոսի հետքը սեւ գիծ մը միայն կը ձգէ...

Գեղեցիկ օրուան մը հրապուրիչ սպաւորութեան տակ, ներս կը մտնենք կաթողիկոսական սենեակէն, ճիշդ բառով, վեհարանէն: Խաչատուր կաթողիկոսը, փափուկ ու փայլուն մանրի մէջ կորսուած անյագ մարմնով, բազմած է սենեկի աջ կողմի բազմոցի վրայ: Իր առաջին տեսքը անմիջապէս մարմնասէր աշխարհիկի մը տպաւորութիւնը գործնց: Կը մօտենամ իրեն, ձեռքը առ-

(\*) Խաչատուր կաթողիկոսը՝ Մանուկ անունով երկու աղտոտ փոքրուորներ ունէր, պղտիկ Մանուկը որ մը մեծկակ զուժար մը ձեռք կանցունէ կաթողիկոսի իրացուցած զբոսմէն եւ խոյս կուտայ, իսկ մեծ Մանուկը ցվերջ կը շարունակէ իր սպրուկի գերը...

ՌՈՒՍԻԱ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ (7)

«Կը պարտաւեն մեզ՝ թէ փոխած ենք մեր քաղաքականութիւնը Ռուսիոյ հանդէպ: Մենք չենք ընդունիր այս կշտամբանքը, որովհետեւ Հայաստանի մասին մեր քաղաքականութեան բուն նպատակն էր պահանջել որ Անդլիա անկախ եւ արժանաւորապէս գործէ: Բայց ճշմարիտ է թէ մենք պատրաստ էինք Ռուսիոյ հետ միահամուռ անկեղծ գործակցութեան մը՝ մեր առաջադրած նպատակի իրագործման համար: Սակայն՝ երբ նկատեցինք թէ Ռուսիա 1876ին զինքը առաջնորդող սկզբունքները բոլորովին կամ գրէթէ թողուց թէ՛ անոր նժարին մէջ փոշի մըն է միայն Դրան քրիստոնեայ հրպատակներուն կիսանքը բազդատմամբ այն տեսանկէցին, զոր ունեցաւ աւազակին (այսինքն Սուլ-

թանին) աչք՝ ականջ եւ սիրալիր խորհրդական դառնալու, մինչև որ այս վերջին ժառանգութիւնը հասունեայ Ռուսական հունձքին համար. եւ երբ տեսանք վերջապէս անոր բռնած ընթացքը Ռուսաստանի մէջ՝ մենք կատարեալ իրաւունք ունենինք ուրիշ միջոցներ որոնել... «Տիկին Օլկա Նովիքովա Ռուսիոյ վրայ իբրև «Եւրոպական» ամենամեծ տէրութիւն՝ իր գրած հանճարեղ պատմութիւնը նորէն սրբագրելու բարոյութիւնն ունի: Մենք կը վախնանք միայն որ ան իր սպարանքը քշելու համար պէտք պիտի ունենայ ուրիշ վաճառանոց փնտոնելու: Անդլիոյ մէջ մարդիկ մեծ համբերութեամբ կը հետեւէին Ռուսական քաղաքականութեան եւ սա՛յն չնչմարեցին թէ Ռուսիա՝ ժամանակը եկած ատեն ամբողջ ժառանգութիւնը վայելելու համար թուրքիոյ ամբողջութիւնը պահպանեն-

նելով ու գլուխ տալով կը նըստիմ: Թուղթերու ու յանձնարարութիւններու յետոյ առիթ կուտան իրեն, իր առջին անտարբերութենէն սխալելու ու լեզուաւորութեան բառարանը բանալու:

ՊԵՏ

[Շարունակելի]

ՔՐՈՆԻԿ

—)(—

Սիւրիստրէէ Պ. Թորգոմ Տ. Պասմաճեան մեզ կը գրէ թէ իրօք այդ քաղաքին հայ գաղթականներուն մէջ խաղամոլութիւնը ճարակած է, եւ անկեղծապէս կը խոստովանի թէ ինք ալ այդ քաղաքն երթալով նոյն մոլութեան ենթարկուեր ու քովը ունեցած ամբողջ հարստութիւնը (100 Քր.) վրայ տուեր է ու տեղացի մը քով գործի մտնել ուղած ատեն իբրև խաղամոլ մերժուեր է: Նամակագիրը ստրչացում կը յայտնէ եւ յորդոր կուզէ իր հայրենակիցներուն ետ քաշուիլ այդ կորստաբեր մոլութենէն:

Պէնելանի թատերախումբը այժմ «Ֆլուէօր» կընէ Սօֆիաի մէջ իր սարքած աղւոր ու զուարճալի ներկայացումներով: Հայ դերասանները արեւելեան խաղեր կը ներկայացնեն ու իրենց կը քաշեն ոչ միայն օտարազգիները այլ եւ զբօսաշրջիկներ իսկ: Օր. Բնար, ճարտար դերասանուհին, հայ բեմին պատիւը միշտ անաղարտ կը պահէ, ու ծափեր կը խլէ հասարակութենէն:

Թուրքիոյ կաթողիկ հասարակութիւնը ունի 14 թեմ, Պրուսա, Գաղատիա, Կեսարիա, Ատանա, Մարաշ, Մալաթիա, Հալէպ, Տիարպէքիւր, Խարբութ,

Մէրաին, Մուշ, Կարին, Տրապիզոն եւ Գահիթէ: Ատոնց առաջնորդները եպիսկոպոսներ են: Կաթողիկ հասարակութիւնը կազմուած է 45—50 հազար հոգիէ: Սմէն քաղաք մէկ եկեղեցի ունի: Այս եկեղեցիները կը յանձնաձուին Փրանսաի Լէոնեան ընկերութեան նպատակով, որ ատեն մը 100,000 Քրանք կուտար, իսկ հիմա 50,000: Պոլսոյ վեճակը աւագ թեմն է եւ 9 եկեղեցի ունի:

«Մէշլէթթէթ»-ի վերջին թիւին մէջ կը կարդանք թէ Գերմանիոյ կայսրը շուն մը նուէր զրկեր է Սուլթանին. թուրք օտկանը կաւելցունէ «Այս նուէր իր նշանակութիւնը, իր ծաւալը, իր յատուկ իմաստը ունի: Կը ցուցնէ թէ Սուլթանը այսուհետեւ պարտաւոր է հնազանդիլ Գերմանիոյ ինչպէս շուն մը իր տիրոջ: Ապտիւլ-Համիտ պիտի հարկընայ այս հրամանը ու պիտի գործադրէ զայն»:

Էմիլ Զօլա, կարգ մը մարդոց պէս, հասնողին դէմ դատ կը բանայ կոր հիմա: «Բըթի ժուռնալ» յօդուած մը կը հրատարակէ որուն մէջ ըսուած է թէ 1830ին իր հայրը, սպայ Փրանսայի ծառայութեան մէջ, կարգ մը յանցապարտ արարքներ ունեցեր է. իր զօրագնդին անտուկին մէջ բաց մը դիտուելով՝ ինք հրաժարեր է հասուցանելէ Լուր այդ գումարը: Զօլա, այս յօդուածին հետեւանօք դատ բացած է թերթին անօրէն Մարինօնիի, խմբագիր ժիւռնէի եւ վարիչ Շաստօնի դէմ:

Պ. Հանրի Ռօշֆոր. «Էնդերանդիժան»-ի խմբագրապետը մենամարտեր է Պ. Փէնօ Ռիշառի հետ՝ ընտրական պայքարին պատճառով: Փէնօ Ռիշառ, որուն հակառակորդը կը պաշտպանուէր

ողբերգազաւշտն): Միակ այս խորագրէն կզգայ ընթերցողը թէ ի՞նչ անամօթ եւ ստորին սուտեր, կոշտ եւ անխիղճ հեգնութիւններ կրնան շարագրել կառավարութեան ըթամիտ լրագրատէրերը. եւ այս կողմաները զո՞վ կը խճրճէին. ազգ մը, որ ամենէն ահուկի եւ սուրող պաստերազմներու մէջ իսկ նմանը չտեսնուած կերպով կը կտրուի թուրքիոյ մէջ, որու բերանը ոստիկանութեան կուռըովը խոչնուած է Ռուսիոյ մէջ եւ այս վոքորդի լրագրատէրերը կը յարձակին այնպիսի ազգի մը վրայ, որ անհունապէս դժբախտ անօրինակ կերպով ջարդուած եւ ո՛ր է պաշտպանութենէ զուրկ է որուն գլխին վրայ կոխած է Սուլթան մը Պոլսոյ մէջ եւ ուրիշ մը՝ քիչ մը աւելի դէպի հարու:

Տօֆր. Բաֆովսի

[Շարունակելի]

Ռոջֆորի թերթով, «Բերթիթ Ռե-բելիլի» մէջ յօդուած մը հը-րատարակեր է որով Պ. Ռոջֆորի ներքին կեանքը խնդրի առարկայ կըլլար: Ասոր վրայ մեծանուն խմբագրապետը արեան գնով հա-տուցում կը պահանջէ զինք նա-խատուէն: Մենամարտը տեղի ունեցեր է ու Ռոջֆոր առաջին ընդհարման մէջ շատ թեթեւա-պէս վիրաւորուեր է կուրծքէն: Պ. Ռոջֆոր իր փոթորկալից կեանք-քին մէջ ազնկալի մենամարտին ունեցած է քսանէ աւելի:

### ՔԱՂԱՔԱՎԱՆ ԴԵՊՔԵՐ

#### Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Երկու նաւատորմերը մրափե-լու վրայ են հիմակ, Սանդիաիօ նաւահանգստին ներսն ու դուր-սը: Սամբուն նաւապետը իր նա-ւերով եկած միացած է Նիլի, որով հոտ ամերիկեան զրահա-ւորներուն թիւը կը բարձրանայ տասներկնին: Սէրվէրա ծովա-կալը կերելայ թէ վարպետ ռազ-մագիտութեան յատակածեւ մը պատրաստած է. ցորչափ դուրս չելլայ իր մտած ծակէն, կացու-թիւնը անփոփոխ կը մնայ, ու երկու նաւատորմերը Անդիլեան ներս այդ ծովափին վրայ մեկա-մազծօրէն պիտի անցունեն ամ-բան տօթակէջ օրերը, առանց զիրար տեսնելու, մինչեւ որ գայ աշունը ու թերեւս ձմեռն ալ: Սէրվէրային համար անկարելի է դուրս ելլալ իր խարսխած ծո-վախորչէն, վասնզի անոր բե-րանը միայն 150 մէթր լայնք ունի, ու զրահաւորները մէկիկ մէկիկ՝ դուրս ելած ատենին՝ կեր պիտի ըլլան եանքի զրա-հաւորներուն: Անոր համար Սէր-վէրա այս անխոհեմութիւնը եր-բեք չընէր, ուրիշ բան է եթէ խաւարակուռ գիշեր մը՝ մութէն օգտուելով մէկէն ի մէկ դուրս խուժէ՝ յանկարծակիի բերելով ամերիկեան մարտանաւերը:

Դարձեալ իրերը կրնան փոխ-ուել եթէ սպանիական օժանդակ նաւատորմ մը դուրսէն օգնու-թեան գայ Սէրվէրային, ու ամե-րիկեան տորմիզը երկու կրակի մէջ բռնուի:

Վերջապէս, սպանիացիները բնաւ վախ չունին դործին եր-կարելէն. ընդհակառակը, կու-ղեն որ գէպքերը ձգձգուին և իրենք ժամանակ ունենան ի-րենց կրած առաջին անաւոր հարուածին ցնցումէն կազդու-ուելու:

Անդին, Մանիլայի առջեւ, Տուէյ սոսկալի ծովակալը՝ հան-գիստի կոչուած հին զօրականի մը խելօքութեամբը կը շարու-նակէ պաշարել այդ նաւահան-գիստը, իր մեծագոյն զուարճու-թիւնը ըլլալով մերթ ծովը դի-

տել՝ անոր յատակը զրկած սպա-նիական դժբախտ մարտանաւերը տեսնելու ջանքով:

Այժմ սպանիոյ մէջ զրոյց մը կայ իբր Գուպարի ապստամբները Ամերիկայի աշակցելու իրենց ա-ռաջագրութենէն ետ կեցած են, ու պատրաստակամութիւն ցոյց կուտան Սպանիոյ միանալու և ուժ տալու անոր դատին: Իրու է որ այս ապստամբները մեծ դոր-ծունէութիւն մը ցոյց չեն տար, բայց հաւանական ալ չէ որ վե-րոյիշեալ աննկերի ապուշու-թիւնը դործեն:

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Մայիս 16 թուով Պոլսէն կը հե-ռագրեն «Թան»:

«Պատերազմական սուգանքին համար Ռուսիոյ ծանուցագրին Գուռը պատասխանեց 300,000 ոսկի տալով կանխիկ, և 550,000 ոսկի ալ երկու տարիէն վճարելի՝ երաշխաւորութեամբ Օսմ. Պան-քայի: Գալով բանտարկեալներու սնուցման համար դոյացած 600 հազար ոսկի պարտքին, ետքէն պիտի կարգադրուի աստիճանա-կան վճարումներով:

«Իտալական զեւպանատունը ի-մացաւ թէ Սէլանիկի մէջ ծովա-յին երկու թուրք սպաներ հինգ-շարթի գիշեր մտեր են խալա-ցիի մը բանեցուցած զարեջրա-տունը, սպաներ են զայն ու վի-րաւորեր են երկու տղաքը: Այս պատճառով զեւպանատունը գի-մում ըրեր է Դրան՝ պահանջե-լով որ քննութիւն մը բացուի և ամէն գոհացում տրուի:

«Յիսուսի չափ հայեր ձերբա-կալուցան, սա պատճառով որ իբր թէ իրենց գաւառացի կա-րօտ հայրենակիցներուն ի նպաստ միջնորդութեամբ գրամին զէնք ու ռազմամթերք գնելու պիտի յատկացնեն եղեր»:

#### Չ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

Թեսալիան կը շարունակուի մեծ արագութեամբ պարպուել. եր-րորդ գօտին հասեր է հելլէն բանակը և մինչեւ ամառը-լուս ըրորովին կազատուի թե-սալիան թշնամի տարրէն: Խառն յանձնաժողովը սահմանադիւրի վերջնական զժման զործողու-թիւններն աւարտեր է:

—Թուրք բանակին Թեսալիայէ դուրս ելլալուն առթիւ, տեղացի շատ թուրքեր և հրեաներ, ու-րոնք երես չունին յոյներուն հետ առաջուան պէս կենակցե-լու, սկսած են դաղթել թուրք-քիա, և իրենց ճամբու ծախքը կը հայթայթուի օսմ. կառավա-րութեան կողմէ:

—Իտալիոյ նախարարութիւնը, խորհրդարանական գործողու-թիւններու ուղղութեան մասին անհամաձայնութեան մը հետե-ւանօք, հրաժարեր է: Ումպէրթօ թագաւորը Պ. Ռուսիոյին յանձ-

նէր է նոր դահլէճին կազմա-թիւնը: Իտալիոյ նախարարա-պետը գիմումներու վրայ է ու-ղեւ չէ յարողած նախարարու-թիւն մը ձեւացնել:

—«Թայպը» կը հաշուէ որ մինչև այ օր սպանիոյ իրկեան պատե-րազմին պատճառած ծախքերուն գումարը կը հասնի 312,285,000 տոլարի:

#### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Սթաիլ» կը տէ թէ օսմ. կա-ռավարութիւնը՝ պուլկարական «Պուլկարիա» և «Պալքան» ապա-հովագրական ընկերութիւննե-րուն արգիլելը է գործել թուրք-քիոյ մէջ, ինչպէս նաեւ արգի-լել է Սէլանիկի մէջ պուլկարա-կան աղագային պանքային մէկ մասնաճիւղին բացումը:

—Պուլկարական շոգենաւային ընկերութեան բաժնետէրերու ընդհանուր ժողովը, որ անց-եալները զուամարտեցաւ, պաշ-տօնանկ ըրեր է տնօրէն Պ. Ռատի-իվանօֆը:

—Կրթական նախարար Պ. Ի-վան Վաղով ընկերակցութեամբ ընդհ. քարտ: ուղար Պ. Լաֆօնիէֆի, հարաւային Պուլկարիա ուղեւո-րեր է վարժարանական քննու-թիւն մը կատարելու համար:

—Սօֆիայի առողջապահական վարչութիւնը որոշեր է Վիսպա-տէն զրկել Պ. Չէրվէն Իվանօֆը, ներկայ դատուելու գերման քի-միագէտ Ֆրէզէնիտսի յիսնամ-նամեայ յրեթեանին և այս առ-թիւ անոր տարրալուծել տալու Մէրիճիլէրի (Չըբբան դաւառակ) հանքային շուրը:

#### Թ Ա Տ Ր Ո Ն

Վաղը, կիրակի գիշեր, հաճի Բանաքօին կից Պոռիս թատրո-նին մէջ պիտի ներկայացուի «ձեռնածու» թատերախաղը՝ հա-յերէ կազմուած նոր խումբի մը կողմէ:

#### Պ Օ Ր Ս Ա

Վառնա 23 Մայիս  
ՊՈՒՂՏԱՅ  
Վակօն, լիպրա 47—51, հէքթօլ 9.50—10 ֆրանք  
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ 8.50—10 ֆրանք

ԱՐԲԱ  
Լիպրա 38—40 հէքթօլ 6.20—6.40 ֆրանք

ՄՐՍԸՐ  
Վակօն, լիպրա 57—58 հէքթօլ 7—7.50 ֆրանք  
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ 7.80—8 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵՍ  
100 օգգասը 15—20 ֆրանք՝ մայր կէօրէ  
Առապա մուամէլէսի Նարոլոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.  
Կիւնտէ 1—2 վակօն վէ 15—20 ա-րապա պուլկարայ, 3—4 արապա արբա, կէլմէքտէ տիր:

—)(—

**ԻԼԱՆԸ ՐԵՍՄԻ**  
Վառնա վէ էթրաֆ քէօլլըրաէ Խրան ակլէթի թէկաւարնոտա պուլուրնան րազպէթու զէվաթա պիլտրիլիք քի. Մայիս այլնոտա քէնտրիլէրի շախտէն վէ ևսխօտ օլմարդը հարտէ վէքեա-լէթլէն րազար կիւնլէրի էօլլէնտէն սօղրա սահաթ 1տէն 5է գատար դօնս սօլոսհանէյէ թէլլըրիթ խուպ. էլլէ-րինտէ օլան էլրազարը թատրիփ վէ խաթլէրինի քի. թիւկ թէֆաթրինէ գայա իթաիլմէլի տիրլէր:  
Վիս Քօնսիլլա զը Բերս  
Վառնա, Գ. ուշաս, ուլիցա Տէպ-րըքա Ն. 66:

**ՍԱՓՐԻՉ**  
—)(—  
Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ ժամանակէ մը ի վեր աշխատելով Օթէլ Բօմբըրիլի կից սափրիչ Անկէլ Եուլմանօֆի քով և տեղոյս պուլկար և հայ պատ-ուարժան յաճախողացս վստահու-թիւնն առ իս գրաւած լինելով, այս անգամ մասնաւոր խանութ մը բացած և՛ Ուլիցա Բրէսլավիցա, օթէլ խմբէ-րիալի կից:  
Լիպրոյս և՛ թէ պատուարժան հասա-րակութիւնը չպիտի դրանայ շարու-նակի ինձ իր քաջալերը, այցելելով այսուհետեւ իմ նոր խանութը ուր պիտի գտնէ կանոնաւոր գործ և ա-մենամեծ մաքրութիւն:  
Միկրակ Սեդրակեան  
—2  
Եւ իմ ընկերս  
Սերօս Իսապիլեան

**ՃԱՇՏԱՐԱՆ ԵՒ ՉԲՕՄԱՐԱՆ**  
—)(—  
ՀԱՃԻ ԲԱՆԱՔՕՒՆ ԺԻՇԻ ԴԵՄԸ  
Կը բանեցունէ Պ. Տիգրան Թիփիկե-ան և ընկեր:

Արհեստին մէջ կատարելութեան հա-սած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովաքուն, մաքուր ու գեղջակա հասարակութիւն ոչ մի-այն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ խթան մը կըլլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց գար-նանային ու ամառնային ժամագրա-վայր մը ընեն զայն զբօսնելու և ճաշելու, Պոնտոսեան ախորժաքը հովիւրուն ու Սիւ ծովի կապոյտ տա-րածութեան առջեւ:  
Հակառակ այս հրապուրիչ առաւե-լութիւններուն, յաճախողները պի-տի գտնեն յոյժ դիւրամտելի գի-ներ թէ ըմպելիքի թէ կերակուրնե-րու մասին:  
8

**ՏՊԱՐԱՆ «ՇՍՐԺՈՒՄ»**  
—)(—  
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամա-կաղրուխ, հարսանեկան հրաի-րագիր, մահազգ, ինչպէս նաև պրօշիւններ:  
Գիներն յոյժ դիւրամտելի:  
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդու-թեամբ և փութով կը կատար-ուին:

**ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍՍԱՆՃԵԱՆ**  
Կ Ո Շ Կ Ա Ա Ր  
Մուսալլա, հաճի Հասան աղաի օթէլին տակ  
—)(—  
Ճաշակաւոր, սոկուն, ձեւաւոր կոշիկ շինել տալ ուղղը պէտք է գրիմէ Պ. Ստեփան Խօրասանձեանի, որուն ճարտարութիւնը մէկ վար-ձով երևան կըլլայ:  
Գիներ գիւրամտաշելի:

Печатница „Взаимность“ Варна.